Minnesota Population Center

Data Entry Instructions
Order N73

Census: 2001
Armenia

IPUMS-International
funded by the University of Minnesota and the National Science Foundation Grant SES-0433654
Minneapolis, Minnesota USA: 2006

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
(ՀՀ ԱՎԾ)

Հաստատված է՝
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի
20. 09. 2001 թ. N 73 որոշմամբ

Մարդահամար –2001 թ.

ՀՐԱՀԱՆԳ

Մարդահամարի տվյալների մուտքագրման կարգի մասին

Երևան - 2001

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
(ՀՀ ԱՎԾ)

Հաստատված է՝
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի
20. 09. 2001 թ. N 73 որոշմամբ

Մարդահամար –2001 թ.

ՀՐԱՀԱՆԳ

Մարդահամարի տվյալների մուտքագրման կարգի մասին

Երևան - 2001

Բովանդակություն

Ընդհանուր տեղեկություն մարդահամարի
Նյութերի մշակման աշխատանքների վեաբերյալ I
Մարդահամարի տվյալների գաղտնիությունը II
Համակարգի աշխատանքը III
Տվյալների մուտքագրում IV
Տվյալների ստուգում V

Սույն հրահանգը մշակվել է 2000թ. փորձնական մարդահամարի «Տվյալների մուտքագրման հրահանգ»-ի և ԱՄՆ-ի Առևտրի դեպարտամենտի Հաշվառումների Բյուրոյի միջազգային ծրագրերի կենտրոնի փորձագետ Շերրելլ Գոգինի «Տվյալների մուտքագրման վերաբերյալ ուղեցույց»-ի հիման վրա: Այն համաձայնեցված է նաև «Մարդահամարի հարցաթերթը լրացնելու կարգի մասին» և «Կոդավորման կարգի մասին» հրահանգների հետ:

I. Ընդհանուր տեղեկություն մարդահամարի նյութերի մշակման աշխատանքների վեաբերյալ

2001թ. հոկտեմբերի 10-ից 19-ը մարդահամարի տվյալները հավաքագրելուց հետո իրականացվող աշխատանքները՝

ա) պայուսակներն ուղեկցող թերթերի ամփոփ տվյալների մուտքագրում (մարդահամարի նախնական ամփոփ տվյալների ստացման համար)

բ) հարցաթերթերի որոշ հարցերի պատասխանների կոդավորում

գ) կոդավորման ստուգում

դ) հարցաթերթի տվյալների մուտքագրում (տվյալների մուտքագրման ծրագրի միջոցով)

ե)կրկնակի մուտքագրում. որոշ տվյալների վերամուտքագրում (վերիֆիկացիա) բնօրինակի հետ համեմատելու և մուտքագրողի աշխատանքը ստուգելու նպատակով

զ)տեղեկատվական բազայի ստուգում և ուղղում (տվյալների հսկման ծրագրի միջոցով)

է) մարդահամարի ճշտված տվյալների հիման վրա ելքային աղյուսակների ստացում:

II. Մարդահամարի տվյալների գաղտնիությունը

Մարդահամարի տվյալների գաղտնիությունն ապահովելու նպատակով մուտքագրողը, համաձայն իր հետ կնքված պայմանագրի, պետք է գործի «Մարդահամարի մասին» օրենքի դրույթներին համապատասխան և հետևի հետևյալ կանոններին՝

ա) արգելվում է հարցաթերթերը աշխատանքային տեղամասից դուրս հանել : Հերթափոխի ավարտից հետո՝ ապահովության նպատակով, հարցաթերթերը անմիջապես պետք է վերադարձնել վերահսկողին:

բ) արգելվում է աշխատանքի պրոցեսում հայտնի դարձած ցանկացած տեղեկատվության արտահոսքը:

III Համակարգի աշխատանքը

CSPro համակարգի աշխատանքը պատկերացնելու համար անհրաժեշտ է իմանալ հետևյալ ամփոփ տեղեկատվությունը (հրամանների վերաբերյալ լրացուցիչ ինֆորմացիա ստանալու համար սեղմել F1-ը) :

Տվյալների մուտքագրման համար օգտագործվող հիմնական ստեղները և նրանց նշանակությունը.

0-9 - թվերը մուտքագրել
Space - ջնջել ընթացիկ դաշտի պարունակությունը
Del - ջնջել ընթացիկ դաշտի պարունակությունը
BkSp -ջնջել նիշը

սլաքների կիրառությունը

Enter - անցում հաջորդ դաշտ
⇒ կամ ⇓ - անցում հաջորդ դաշտ
⇐ կամ ⇑ - վերադարձ նախորդ դաշտ

էկրանից էկրան անցումը

PgUp - վերադարձ նախորդ էկրան
PgDn- անցում հաջորդ էկրան (կաշխատի միայն այն դեպքում, երբ տվյալներն արդեն մուտքագրվել են)

F12 - հարցաթերթը պահպանել հիշողության մեջ (պահպանում է ընթացիկ հարցաթերթի տվյալները)

ESC - ջնջել հարցաթերթը (վերացնում է ընթացիկ հարցաթերթի տվյալները)

IV. Տվյալների մուտքագրում

Աշխատանքը իրականացվում է չորս էկրանների միջոցով՝ գեոկոդերի էկրան, անձերի երկու էկրան և բնակության պայմանների էկրան:

1. Մուտքագրումն սկսելու համար սեղմել էկրանին տեղադրված համապատասխան պիտակը:

2. Բացվում է պատուհան, որը պահանջում է մուտք անել այն ֆայլի անունը, որը օգտագործում ենք հարցաթերթերի տվյալ պայուսակի համար (օգտվել վերահսկողի կողմից տրամադրված ֆայլի անունից):
3. Հաջորդ բացվող էկրանը (Operator ID) կպահանջի մուտքագրողի համարը, որը տրամադրվել է վերահսկողի կողմից: Կոդ չունենալու դեպքում անմիջապես դիմել վերահսկողին:
4. Վերը նշված գործողությունները ճիշտ կատարելու դեպքում մուտք կգործեք տվյալների մուտքագրման համակարգ, որտեղ սեղմելով միաժամանակ Ctrl+A ստեղները ծրագիրը կմտնի մուտքագրման ռեժիմ: Յուրաքանչյուր պայուսակի համար կբացվի հետևյալ էկրանը՝

5. Յուրաքանչյուր պայուսակն ունի մեկ ուղեկցող թերթ, որտեղ զետեղված է տվյալ պայուսակի տնային տնտեսությունների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն: Տվյալ պայուսակին պատկանող ուղեկցող թերթից մուտքագրել միայն վերը պատկերված դաշտերի համապատասխան կոդերը: Գեոկոդերը մուտքագրելու ժամանակ համակարգը կստուգի կոդերի ճշտությունը: Եթե չի գտնվել մուտք արված կոդը, էկրանին կերևա հաղորդագրություն սխալի մասին և մուտքագրողը չի կարող շարունակել աշխատանքը մինչև չճշտի գեոկոդը: Գեոկոդը ուղղելուց հետո, եթե սխալի մասին հաղորդագրությունը չի վերացել, ապա անմիջապես դիմել վերահսկողին պրոբլեմը լուծելու համար:

«Սխալ գեոկոդ» հաղորդագրության դեպքում անպայման դիմել վերահսկողին, մի փորձեք շարունակել մուտքագրումը, այլապես դուք վտանգում եք ամբողջ պայուսակի տվյալների ճշտությունը :

Գեոկոդերը և որոշ ամփոփ տվյալներ ճիշտ մուտքագրելուց հետո, անցնել պայուսակում եղած առանձին հարցաթերթերի տվյալների մուտքագրմանը:

6. Հարցաթերթի առաջին էջից հարցաթերթի համարը և բնակելի միավորի համարը մուտք անելուց հետո կբացվի հաջորդ էկրանը, որը վերաբերում է անձերին: Մուտքագրման այս փուլը՝ անձերի վերաբերյալ տվյալների մուտքը, կատարվում է երկու էկրանով: էկրանից էկրան անցումը տվյալ դեպքում կատարվում է Ctrl+/ ստեղների միջոցով: Մուտքագրել այն քանակությամբ անձ, որքան գրանցված է հարցաթերթում, ուշադիր հետևելով հաղորդագրություններին: Տվյալ դաշտի համար թույլատրելի սահմաններից դուրս արժեք մուտք անելու դեպքում էկրանին կերևա հաղորդագրություն այդ մասին , եթե սխալը համապատասխանում է հարցաթերթի կոդի հետ սեղմել F2՝ հաջորդ դաշտ անցնելու համար, հակառակ դեպքում ուղղել սխալը: Առաջին դաշտը (սյունակ 1) անձի համարը՝ դրվում է ավտոմատ կերպով: Այնուհետև ըստ հերթականության մուտքագրել նաև մյուս տվյալները դատարկ թողնելով այն դաշտերը, որոնք լրացված չեն (սեղմել ENTER ստեղնը): Այն

անձանց դեպքում, որոնց վերաբերյալ ոչ բոլոր տվյալներն են լրացված (տարիքային սահմանափակում ունեցող և ժամանակավոր ներկա անձերին չվերաբերող դաշտերը), սեղմել / ստեղնը, որը կապահովի անցում հաջորդ անձին:

V

ՄԱՐԴԱՀԱՄԱՐ 2001

(Անձերի մուտքագրման էկրան-1)

	Հերթական համարը	2	3	4	5	6	7ա	7բ	8	9ա	9բ	9գ
1												
2												
3												
4												
5												

7. Հարցաթերթի բոլոր անձերի վերաբերյալ տվյալները մուտքագրելուց հետո սեղմել էկրանից էկրան անցնելու համար նախատեսված ստեղնը (Ctrl+/) , համակարգը կանցնի հաջորդ փուլին՝ բնակության պայմանների տվյալների մուտքագրման էկրանին: Եթե «Ընդամենը» դաշտում մուտք արված թիվը չի համապատասխանում արդեն մուտքագրված անձերի քանակին, ապա խորհրդակցել վերահսկողի հետ, ճշտելու համար թե ինչ հետագա քայլեր է հարկավոր ձեռնարկել: Բնակության պայմանների տվյալների մուտքի էկրանի տեսքը՝



8. Բնակության պայմանները մուտքագրելիս վերջին դաշտի տվյալները մուտք անելուց հետո կհայտնվի «Ընդունել՞ հարցաթերթը» հարցը: Մյուս տնային տնտեսությանը անցնելու համար սեղմել ENTER ստեղնը, համոզվելով, որ ցուցիչը Yes-ի վրա է: Եթե անձը անօթևան է, ապա լրացնել բնակության պայմանների միայն առաջին դաշտը՝ մնացած բոլոր դաշտերը թողնելով դատարկ: «Անօթևան»-ին համապատասխանող կոդը մուտքագրելուց հետո սեղմել F12 (կամ /) ստեղնը կբացվի պատուհան՝ «Ընդունել՞ հարցաթերթը» հաղորդագրությամբ: Yes-ը սեղմելու դեպքում կանցնեք հաջորդ հարցաթերթի համարին:

Այս ամենը ճիշտ կատարելուց հետո կարող ենք ասել .

- Հարցաթերթի տվյալները մուտքագրված և պահպանված են

9. Հարցաթերթի հետ աշխատանքները ավարտելուց հետո դարձյալ կհայտնվի գեոկոդի էկրանը: Պայուսակի մնացած հարցաթերթերի համար կարիք չկա նորից մուտք անել գեոկոդերը, քանի որ այդ պայուսակին պատկանող մնացած բոլոր հարցաթերթերի գեոկոդերը համապատասխանում են պայուսակի համար մուտքագրված գեոկոդին:

V. Տվյալների ստուգում

Հարցաթերթի ստուգման պրոցեսը նույնատիպ է մուտքագրման պրոցեսին: Կրկնակի մուտքի (վերիֆիկացիայի) ռեժիմ մտնելու համար ի տարբերություն մուտքի ռեժիմի պետք է սեղմել **Ctrl +V** և ոչ թե Ctrl + A:

Աշխատանքը դադարեցնելու համար սեղմել Ctrl+S ստեղները միաժամանակ :

Ստուգման ընթացքում, եթե էկրանին հայտնվել է «Դաշտի արժեքները չեն համընկնում» հաղորդագրությունը, ապա հնարավոր են հետևյալ երկու իրավիճակները՝ սխալվել է սկզբնական մուտքագրողը կամ սխալվել է ստուգող մուտքագրողը:

ա) Եթե սկզբնական մուտքագրողն է սխալվել, ստուգող մուտքագրողը պետք է համոզվի, որ տվյալը ինքը ճիշտ է մուտքագրել (հարցաթերթում գրված տվյալի հիման վրա) և եթե այդպես է կրկնակի անգամ սեղմի ENTER ստեղնը, որպեսզի համակարգը ընդունի ճիշտ թիվը:

բ) Եթե սխալը թույլ է տվել ստուգող մուտքագրողը (սկզբնական մուտքագրողը ճիշտ է կատարել մուտքագրումը), դարձյալ ստուգել մուտքագրված թիվը հարցաթերթում եղած տվյալի հետ, ուղղել այն և կրկնակի անգամ սեղմել ENTER ստեղնը , որպեսզի համակարգը ընդունի ճիշտ թիվը:

Բառարան

Դաշտ - Հարցաթերթի տվյալների տարրերն են: Դաշտերը համընկնում են հարցաթերթի սյուներին (օրինակ՝ անձի տարիքը կամ սեռը) :

Գեոկոդ - Աշխարհագրական կոդ: Այն հետևյալ դաշտերի կոդերի հանրագումարն է՝ մարզ, տարածք, համայնք, բնակավայր և պայուսակ:

Գրառում -վերաբերում է իրար հետ փոխկապակցված ինֆորմացիայի երկու բլոկերի գրառմանը՝ մեկը վերաբերում է անձերին, մյուսը՝ բնակության պայմաններին:

ՀԱՎԵԼՎԱԾ

Հաղորդագրություններ
reports

OUT OF RANGE *Enter valid value* *or Press F2 to force*	Մուտքագրված թիվը դաշտի սահմաններից դուրս է Ուղղել թիվը կամ սեղմել F2 շարունակելու համար
Correct Col 9(a,b,g,d) *Press F8 to clear*	Ուղղել 9(ա, բ, գ, դ) դաշտերը (սյունները) Սեղմել F8 շարունակելու համար: (Եթե նշված դաշտերից որևէ մեկում սխալ եք թույլ տվել, համեմատելով հարցաթերթի հետ ուղղել այն, եթե մուտք արված թվերը համապատասխանում են հարցաթերթին, սեղմել F8)
Correct Col 13 *Press F8 to clear*	Ուղղել 13 դաշտը (սյունը) (Եթե սխալ եք թույլ տվել, համեմատելով հարցաթերթի հետ ուղղել այն, եթե մուտք արված թիվը համապատասխանում է հարցաթերթին, սեղմել F8)
Persons count is not equal to total person in HH	Անձերի քանակը ("Ընդամենը" դաշտի արժեքը) հավասար չէ արդեն մուտքագրված անձերի թվին:

Մուտքագրման ռեժիմ

Ստեղների նշանակությունը

Ctrl+A	Բացել ծրագիրը մուտքագրման ռեժիմում
Space	Ջնջել ընթացիկ դաշտի պարունակությունը
Del	Ջնջել ընթացիկ դաշտի պարունակությունը
BkSp	Ջնջել նիշը
→↓	Անցնել հաջորդ դաշտ
←↑	Վերադառնալ նախորդ դաշտ
Enter	Անցնել հաջորդ դաշտ
F3	Ավելացնել անձերի վերաբերյալ գրառում ակտիվ գրառումից առաջ
Ctrl + F3	Ավելացնել անձերի վերաբերյալ գրառում ակտիվ գրառումից հետո
F4	Ջնջել ակտիվ գրառումը
/	Անցնել հաջորդ գրառմանը
Ctrl+/	Անցնել հաջորդ էկրան
F12	Հարցաթերթը ընթացիկ վիճակով պահել հիշողության մեջ
F7	Անցնել գեոկոդերի դաշտ

Վերիֆիկացիայի ռեժիմ

Ctrl+V	Մտնել վերիֆիկացիայի ռեժիմ
THIS FIELD DOES NOT MATCH	Դաշտի արժեքները չեն համապատասխանում Եթե վերիֆիկատորը (ստուգող մուտքագրողը) համոզված է, որ ինքն է ճիշտ մուտքագրում կատարել, հաջորդ դաշտ անցնելու համար կրկնակի անգամ պետք է սեղմի Enter ստեղնը : Եթե սխալը կատարել է վերիֆիկատորը, ուղղելու համար պետք է սեղմի Enter ստեղնը, որպեսզի վերադառնա նույն դաշտ:
Space	Ջնջել ընթացիկ դաշտի պարունակությունը
Del	Ջնջել ընթացիկ դաշտի պարունակությունը
BkSp	Ջնջել նիշը
→↓	Անցնել հաջորդ դաշտ
←↑	Վերադառնալ նախորդ դաշտ

Մոդիֆիկացիայի ռեժիմ

Ctrl+M	Ստանել մոդիֆիկացիայի ռեժիմ
PgDn	Անցնել հաջորդ էկրան
PgUp	Վերադառնալ նախորդ էկրան
Ctrl+PgDn	Անցնել հաջորդ հարցաթերթին
Ctrl+PgUp	Վերադառնալ նախորդ հարցաթերթին
Ctrl+End	Անցնել վերջին հարցաթերթին
Ctrl+Home	Վերադառնալ առաջին հարցաթերթին
Space	Ջնջել ընթացիկ դաշտի պարունակությունը
F3	Ավելացնել անձերի վերաբերյալ գրառում ակտիվ գրառումից առաջ
Ctrl + F3	Ավելացնել անձերի վերաբերյալ գրառում ակտիվ գրառումից հետո
F4	Ջնջել ակտիվ գրառումը
/	Անցնել հաջորդ գրառմանը
Ctrl+/	Անցնել հաջորդ էկրան
F12	Հարցաթերթը ընթացիկ վիճակով պահել հիշողության մեջ
BkSp	Ջնջել նիշը
→↓	Անցնել հաջորդ դաշտ
←↑	Վերադառնալ նախորդ դաշտ